ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 10 » մարտ 2026թ. No 1232 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 66-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1105-26 առ 03.03.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 4 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի

32-րդ ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 76-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Արիպրազոլ N 21916 և N 21917, Սինուպրետ ֆորտե N 21074 դեղերի գրանցման հավաստագրերը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի մարտի «10 » - ի N1232 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով

գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Արիպրազոլ	արիպիպրազոլ	դեղահատեր	10մգ; (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում	Ֆարմա Ստարտ ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Սցինո Ուկրաինա ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Դ	23898 (023838) 27.02.2026
2	Արիպրազոլ	արիպիպրազոլ	դեղահատեր	15մգ; (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում	Ֆարմա Ստարտ ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Սցինո Ուկրաինա ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Դ	23899 (023838) 27.02.2026
3	Սինուպրետ ֆորտե	աղավնիձի խոտ, բոգի արմատներ, ավելուկի խոտ, գնարբուկի ծաղիկներ, կտտկենու ծաղիկներ	դեղահատեր թաղանթապատ	36մգ+12մգ+36մգ+36մգ+36մգ; (20/1x20/) բլիստերում, (50/2x25/) բլիստերում	Բիոնորիկա ՍԵ, Կերչեյնշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալզ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Ռոտենդորֆ Ֆարմա ԳմբՀ, Օստենֆելդեր Շտրասսե 51-61, 59320 Էնիգերլոհ, Գերմանիա- բալք արտադրող	Գերմանիա	Բիոնորիկա ՍԵ, Կերչեյնշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալզ	Գերմանիա	ԱԴ	23900 (019857) 27.02.2026

4	Սինուպրետ ֆորտե	աղավնիձի խոտ, բոգի արմատներ, ավելուկի խոտ, գնարբուկի ծաղիկներ, կտտկենու ծաղիկներ	դեղահատեր թաղանթապատ	36մգ+12մգ+36մգ+36մգ+36մգ; (20/1x20/) բլիստերում, (50/2x25/) բլիստերում	Բիոնորիկա ՍԵ, Կերչեյնշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալզ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Ռոտենդորֆ Ֆարմա ԳմԲՀ, Օստենֆելդեր Շտրասսե 51-61, 59320 Էնիգերլոհ, Գերմանիա- բալք արտադրող	Գերմանիա	Բիոնորիկա ՍԵ, Կերչեյնշտեյներ 11-15 փ., 92318 Նեումարկտ ին դեր Օբերպֆալզ	Գերմանիա	ԱԴ	23901 (019857) 27.02.2026